

## ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 11 Փետրուարի, 2008

Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեն յայտնել է, որ Ուրբաթ, Փետրուարի 8-ին Լոս Անջելոսում իր մահկանացուն է կնքել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիրներից՝ Քրիստափոր Միքայելեանի թոռնուհին՝ Ելենա Միքայելեան-Չելեաբովան երկարատեւ հիւանդութեան պատճառով: Հանգուցեալը ծնուել էր 1917 թուականին, Կիււում: Այս տխուր առիթով, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեն եւ շարքերը ցաւակցութիւն են յայտնել հանգուցեալի ընտանեկան պարագաներին եւ հարազատներին: Հանգուցեալի յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը տեղի կունենայ Երեքշաբթի, Փետրուար 19-ին, Forest Lawn Hollywood Hills գերեզմանատանը:



Բըրքլիի քաղաքապետական խորհուրդը Յունուարի 29-ի նիստի ընթացքում միաձայնութեամբ վաւերացրել է յատուկ բանաձեւ, որը Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Պալատին կոչ է անում առաջ մղել Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը վերաբերող թիւ 106 բանաձեւը: Սոյն միջոցառումը ներկայացուել է Բըրքլիի քաղաքապետական խորհրդի անդամ Քրիս Կորթինգթընի կողմից, որը գործակցելով ՀՀԴ Կալիֆորնիայի Ծովածոցի շրջանի Հայ Դատի Յանձնախմբի հետ մշակել եւ ձեւակերպել է բանաձեւը: Բազմաթիւ ամերիկահայեր, որոնց թւում Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան եւ Բըրքլիի համալսարանի հայ ուսանողական միութեան անդամներ ներկայ են գտնուել Քաղաքապետական խորհրդի վերոնշեալ նիստին՝ իրենց զօրակցութիւնը արտայայտելու համար բանաձեւի անցկացման կապակցութեամբ: «Ես շատ ուրախ եմ, որ Բըրքլի քաղաքը դարձեալ թիկունք կանգնեց մարդու իրաւունքների պաշտպանութեանը», - ասել է Բըրքլի համալսարանի ուսանողներից եւ Հայ Դատի Յանձնախմբի անդամներից Շանթ Յակոբեանը եւ աւելացրել,- «Բանաձեւը եւս մի քայլ է արդարութեան առաջնդման ուղղութեամբ»:



Կիրակի, Յունուարի 20-ի կէսօրից յետոյ ժամը 2-ին Սան Ֆրանցիսկոյի «Վասպուրական» սրահում տեղի է ունեցել յատուկ հանդիսութիւն, որի ընթացքում ներկայացուել է «Հ.Յ.Դաշնակցութեան Ալբոմ-Ատլաս»-ը: Կանգնութեան բացումը կատարել է Հ.Յ.Դ. Սան Ֆրանցիսկոյի «Քրիստափոր» կոմիտեութեան ներկայացուցիչ Ջարեհ Սամուրգաշեան, որը ողջոյնի խօսքից յետոյ հանգամանօրէն ներկայացրել է «Ալբոմ-Ատլաս»-ի հատորների հեղինակ, բազմավաստակ մտաւորական, ազգային ու կուսակցական վաստակաշատ գործիչ Յակոբ Մանճիկեանին: «Ալբոմ-Ատլաս»-ի առաջին հատորի անգլերէն օրինակը ներկայացրել է մատենաշարի հեղինակ Յակոբ Մանճիկեանը, որն ասել է, թէ,- «Յուշամատեանը մեզ յիշեցնում է հայ ժողովրդի փառքն ու պարծանքը դարձած բազմաթիւ դէպքեր ու դէմքեր եւ թելադրում է յարգել նրանց յիշատակը»: Միջոցառման աւարտին, ներկաների կողմից «Ալբոմ-Ատլաս»-ի մասին տրուել են հարցումներ, որոնց պատասխանել ու գնուած հատորները սիրով մակագրել է հեղինակը:



Երկուշաբթի, Փետրուարի 11-ին, ՀՀԴ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը ցաւակցական մասնակներ է յղել Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Պալատի Արտաքին յարաբերութիւնների հարցերով յանձնախմբի նախագահ՝ Թամ Լանթոսի ընտանիքին եւ Ներկայացուցիչների Պալատի Դեմոկրատական կուսակցութեան հատուածի ղեկավարութեանը, նոյն օրը տեղի ունեցած Լանթոսի մահուան առիթով: Հրէական ողջակիզումից փրկուած եւ մարդու իրաւունքների պաշտպան 80-ամեայ Թամ Լանթոսը անցեալ տարի կարեւոր դեր ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւը Ներկայացուցիչների Պալատի Արտաքին յարաբերութիւնների հարցերով յանձնախմբի կողմից վաւերացուելու գործում, որը պսակցուեց յաջողութեամբ՝ հակառակ Միացեալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշի վարչակարգի ցուցաբերած ընդդիմութեանը:



ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի Արիեստավարժների ցանցը միշտ նեցուկ է կանգնել Հայ Օգնութեան Միութեան կողմից Հայաստանում ու Արցախում նախաձեռնուած որբերի օժանդակութեան աշխատանքներին: Այս տարի եւս, կազմակերպութիւնը 4000 տոլար է նուիրել ՀՕՄ-ին, որի մի մասը յատկացուելու է Արցախի Աշան գիւղում գտնուող ՀՕՄ-ի «Սօսէ» մանկապարտէզի նորոգութեան աշխատանքներին:

Այս լուրերը տրամադրուած են  
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: